



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան

30.07.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/50

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Մասնակցությամբ՝

Ընկերության՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սարգսյանի,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 01.07.2019թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի

գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետի՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ հայտը մերժելու մասին 21.06.2019թ որոշումը, «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը թիվ 2 և 4, АО ПИК «Энерготраст» թիվ 7 և ИП Амбарцумян Хачатур Сережаевич թիվ 9 չափաբաժինների համար 21.06.2019թ. որոշումը և «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.07.2019թ.-ն և 02.07.2019թ.-ի որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 11.07.2019թ.-ին, 16.07.2019թ.-ին և 22.07.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 22.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 30.07.2019թ.-ին:

2. «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ՀԱԷԿ» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19 ծածկագրով գնման ընթացակարգ (հետայսու՝ նաեւ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերությունը կոնսորցիումով «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ (հետայսու՝ նաեւ Ընկերություն):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17 հունիսի 2019թ թիվ 4 արձանագրության 7-րդ կետի համաձայն Ընկերությանը ճանաչել է առաջին տեղ զբաղեցնող՝ 2, 4, 7, 9 չափաբաժիններով:

Թիվ 4 արձանագրության 8-րդ կետով արձանագրել է, որ «Ընկերության ներկայացված նմանարիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամբ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019, իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019թ: Քանի որ թիվ 7

չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական, ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափսերը եւ նշել թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:»

Գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը կասեցնել եւ առաջարկել Ընկերությանը 1 աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված խախտումը:

Թիվ 4 արձանագրության 8-րդ կետով արձանագրված խախտումը Ընկերությունը շտկել է սահմանված ժամկետում:

Գնահատող հանձնաժողովը 21.06.2019թ թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետով որոշել է՝ առաջնորդվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով եւ 6-րդ մասով մերժել «Էյջ Զի Էյջ Քոնփանի» ՍՊ ընկերության եւ «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության կոնսորցիումի հայտը, հիմք ընդունելով նաեւ այն հանգամանքը, որ «Էյջ Զի Էյջ Քոնփանի» ՍՊ ընկերությունը «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ կոնսորցիումով հանդես է եկել նաեւ «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերման համար հրապարակված ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19 ծածկագրով գնման ընթացակարգին:

Թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետով նաեւ որոշել է առաջարկել «Մամլիչ-ՆԿ» ՍՊ ընկերությանը ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը թիվ 2 եւ 4, АО ПИК «Энергоотраст» թիվ 7 եւ ИП Амбарцумян Хачатур Сергеяевич թիվ 9 չափաբաժինների համար:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն օրենքի նպատակն է ի թիվս այլի՝ գնումների եւ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը:

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետեւյալ սկզբունքների վրա.

- 1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային եւ ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.
- 2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում եւ նրանց միջեւ մրցակցության խրախուսում.
- 3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից եւ իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաեւ պաշտոնական տեղեկագրում:

Սույն հոդվածով օրենսդիրը անշեղորեն սահմանել է այն օրենսգիրքը եւ օրենքը որով պետք է ղեկավարվեն գնումների գործընթացի իրականացման ժամանակ, իսկ իրավական այլ ակտեր ասելով նկատի ունի կառավարության որոշումներ, գերատեսչությունների լիազոր անձի պաշտոնական պարզաբանումներ (որոնք կարող են վերաբերել գնումների գործընթացի կազմակերպմանը) եւ այլն:

Օրենքի 4-րդ հոդվածի ուսումնասիրությունից չենք կարող ողջամտորեն ենթադրել, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի համար առաջնորդվող իրավական ակտ կարող է լինել նաեւ ՀՀ հարկային օրենսգիրքը:

ՀՀ հարկային օրենսգրքի 1-ին հոդվածը սահմանում է հարկային օրենսգրքի կարգավորման առարկան, համաձայն որի՝

1. Հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի (այսուհետ՝ հարկեր) եւ Օրենսգրքով նախատեսված վճարների (այսուհետ՝ վճարներ) հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ), սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, հարկի եւ վճարի հասկացությունները, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաեւ հարկային արտոնությունները:

2. Վճար վճարողների շրջանակը, վճարների դրույքաչափերը, վճարների հաշվարկման, վճարման, գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաեւ վճարների գծով արտոնությունները սահմանվում են Օրենսգրքով կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով:

3. Հարկային հարաբերությունները հարկ վճարողների հաշվառման, սպասարկման, հարկերի ու վճարների սահմանման, հաշվարկման, վճարման, հարկային պարտավորությունների հաշվառման, իսկ Օրենսգրքով սահմանված դեպքերում՝ գանձման, հարկերի ու վճարների վերադարձման, հարկային արտոնությունների սահմանման, հարկ վճարողների, հարկային եւ լիազոր մարմինների լիազորությունների ու

պարտականությունների ամրագրման, հարկային հսկողության իրականացման, Օրենսգրքի և վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքների դրույթները խախտելու համար պատասխանատվության միջոցների կիրառության, հարկային պարտավորությունների կատարման ապահովման, ինչպես նաև հարկային վեճերի լուծման հետ կապված հարաբերություններն են:

«Հարկային օրենսգրքի 2-րդ հոդվածը սահմանում է հարկային հարաբերությունների կարգավորումը, համաձայն որի՝

1. Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանց հիման վրա եւ դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի 1-6-րդ կետերում նշված իրավական ակտերով (այսուհետ՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր):

2. Վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով հարկային հարաբերությունները կարող են կարգավորվել միայն Օրենսգրքով սահմանված դեպքերում եւ սահմաններում:

3. Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված իրավական ակտերից փարբերվող այլ իրավական ակտերով չեն կարող կարգավորվել հարկային հարաբերություններ, բացառությամբ,

1) Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի.

2) «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

3) Հայաստանի Հանրապետության քրեական եւ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքերի.

4) «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի.

5) «Հարկային ծառայության մասին» եւ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների.

6) «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

ՀՀ հարկային օրենսգրքի 4-րդ հոդվածը սահմանում է օրենսգրքում կիրառվող հիմնական հասկացությունները, համաձայն որի՝ 1-ին մասի հետևյալ կետերի

11) հարկ վճարող՝ կազմակերպություն կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր, նույնպես), որը Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ունի կամ կարող է ունենալ հարկ կամ վճար վճարելու պարտավորություն.

12) հարկային մարմին՝ Պետական եկամուտների կոմիտե.

13) հարկային վարչարարություն՝ լիազոր մարմին՝ Օրենսգրքի եւ այլ իրավական ակտերի հիման վրա իրականացվող գործողությունների ամբողջություն՝ ուղղված հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի համադրած եւ ճիշտ կիրառության ապահովմանը.

14) լիազոր մարմին՝ Օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին.

ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է՝ համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում համատեղ գործունեության այն մասնակիցը, որը բնութագրվում է սույն մասում նշված հատկանիշներով՝ ըստ առաջնահերթության.

որի 6-րդ կետի համաձայն՝ համարվում է ռեզիդենտ կազմակերպություն: Եթե համատեղ գործունեության մասնակիցների մեջ կան մեկից ավելի ռեզիդենտ կազմակերպություններ, ապա համատեղ գործունեության հաշվետու մասնակից է համարվում այն ռեզիդենտ կազմակերպությունը, որը համատեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համատեղ գործունեության մեջ ունի առավելագույն ներդրում.....:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կարող է համատեղ գործունեության հաշվետու մասնակից լինել միայն մեկ համատեղ գործունեության պայմանագրով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Ընկերության հայտը առաջնորդվել է ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով եւ 6-րդ մասով:

Վերը ներկայացված օրենսդրական նորմերի համալսումնաբերական վերլուծելով առկա փաստական հանգամանքները՝ արձանագրում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավասու չէր առաջնորդվել հարկային օրենսգրքով, քանի որ այն չի հանդիսանում գնումների ոլորտը կարգավորող օրենսդրական ակտ, գնահատող հանձնաժողովը հարկային կամ լիազոր մարմին չէ, որպեսզի իրականացնի հարկային վարչարարություն: Հարկային օրենսգրքի սկզբունքները եւ կարգավորումները չի կարող կիրառելի լինել գնման իրավահարաբերությունների դեպքում, քանի որ նախատեսված չէ օրենքով:

Հարկային օրենսգրքը կարգավորվում է պետություն եւ հարկատու իրավահարաբերությունը հարկային մարմնի՝ պետական եկամուտների կոմիտեի եւ լիազոր մարմնի՝ օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված դեպքերում ու սահմաններում վարչարարություն կամ հսկողություն իրականացնող պետական կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով:

Գնահատող հանձնաժողովը 17.06.2019 թվականի թիվ 4 արձանագրությամբ, երբ որոշել է Ընկերության ներկայացրած փաստաթղթերի համապատասխանության հարցը, իրազեկ է եղել, որ Ընկերությունը կոնսորցիումով մասնակցել է նաեւ ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19 ծածկագրով գնման ընթացակարգին եւ այդ ընթացակարգը տեղի է ունեցել ավելի վաղ, Հրավերը հրապարակվել է 22.04.2019թ, իսկ հայտերը բացվել են 07.05.2019թ: ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19 ծածկագրով ընթացակարգի Հրավերը հրապարակվել է 13.05.2019թ եւ հայտերը բացվել են 29.05.2019թ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, եթե օրինաչափ է գնահատում իր գործողությունը ՀՀ հարկային օրենսգրքով առաջնորդվելը, ապա 17.06.2019թ թիվ 4 արձանագրությամբ պետք է մերժեր Ընկերության հայտը եւ ոչ թե ժամանակ տրամադրեր ներկայացնելու փաստաթղթերի շտկված տարբերակը:

ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով առաջնորդվելով գնահատող հանձնաժողովը արդյո՞ք ունեցել է բավարար հիմքեր, գործիքակազմ ստուգելու համարեղ գործունեության պայմանագրի կնքման պահին համարեղ գործունեության մեջ

ընկերությունների առավելագույն ներդրումը, եւ ներդրման հարաբերակցությունն արդյո՞ք հիմք է հանդիսացել Ընկերության հայտը մերժելու համար:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածն ամրագրում է օրինականության սկզբունքը, համաձայն որի՝ 1. Պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

1) հայտը ներառում է նաեւ համատեղ գործունեության պայմանագիր.

2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.

3) մասնակիցները կրում են համատեղ եւ համապարտ պատասխանատվություն.

4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն հոդվածի ուսումնասիրությունից չենք կարող արձանագրել, որ «Էյջ Ջի Էյջ Քոնվանի» ՍՊ ընկերությունը «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հետ կոնսորցիումով չէր կարող մասնակցեր նույն պատվիրատուի կողմից ներկայացրած տարբեր գնման ընթացակարգերին:

Հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետով սահմանափակումը ձեւակերպված է ավելի քան պարզ, որը տարընկալման տեղիք չի կարող տալ, իսկ վիճարկվող ընթացակարգում Ընկերությունը կոնսորցիումով հանդես է եկել համատեղ հայտով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգը եւ «Գնումների մասին» ՀՀ օրենքը եւ վերը ներկայացված նորմերով առաջնորդվելու իրավունք է վերապահել իրեն՝ խախտելով ՀՀ Սահմանադրության օրինականության սկզբունքը:

04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով (հետայսու՝ նաեւ Կարգ) սահմանված է, թե որ դեպքում, ինչ փաստական հանգամանքների առկայությամբ գնահատող հանձնաժողովը իրավասու է

մերժել մասնակցի հայտը, եթե առկա են Կարգի 40-րդ մասի 4-րդ կետով, 48-րդ մասի 2-րդ կետով, 67-րդ, 92-րդ մասերով նախատեսված հիմքերը, ինչպես նաև այլ հիմքեր:

Կարգի 32-րդ մասի 7-րդ կետի գ) ենթակետի համաձայն՝ հրավերով սահմանվում է, որ համատեղ գործունեության պայմանագրի կողմերից որեւէ մեկը չի կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ: Սույն պարբերության պահանջի չպահպանման դեպքում հայտերի բացման նիստում մերժվում են ինչպես համատեղ գործունեության կարգով, այնպես էլ առանձին ներկայացված հայտերը:

ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19 ծածկագրով գնման ընթացակարգում առկա փաստերի վերլուծության եւ օրենսդրական կարգավորումների կիրառման մեկնաբանության արդյունքում փաստում ենք, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության կոնսորցիումով «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊ ընկերության հայտը մերժել է անհիմն եւ Ընթացակարգի գնահատումն իրականացրել է գնումների գործընթացը կարգավորող օրենսդրությամբ ամրագրված վերոհիշյալ նորմերի խախտմամբ, միեւնույն ժամանակ, վերապահելով լիազորություն՝ որով օրենսդիրը չի լիազորել գնահատող հանձնաժողովին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 4.1 արձանագրությամբ պետք է արձանագրեր «Գնումների մասին» ՀՀ օրենքի այն նորմը եւ/կամ 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի այն կետը, որով իրավասու էր ղեկավարվել՝ Ընկերության հայտը մերժելու մասին որոշում կայացնելիս:»:

Վերոգրյալների հիման վրա, Ընկերությունը Բողոքներ քննող անձից խնդրել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել դադարեցնել թիվ 4.1 արձանագրության 8-րդ կետի՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ հայտը մերժելու մասին 21.06.2019թ որոշումը, «Մամլիչ-ՆԿ» ՍՊԸ-ին ներկայացնել հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթերը թիվ 2 և 4, АО ПИК «Энерготраст» թիվ 7 և ИП Амбарцумян Хачатур Сережаевич թիվ 9 չափաբաժինների համար 21.06.2019թ. որոշումը և «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ հայտը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընկերությունը 15.07.2019թ.-ին Բողոքներ քննող անձին է ներկայացրել Պատվիրատուի կողմից ներկայացված դիրքորոշման վերաբերյալ առարկություններ, մասնավորապես.

««Հայկական ապոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությունը ԳԲԲԱ-ԼՕ-2019/50 բողոքի առնչությամբ դիրքորոշմամբ հայտնում է, որ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊ ընկերության ներկայացրած փաստաթղթերում գնահատող հանձնաժողովն արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ եւ մասնավորապես նշում է երկուսը, մեկը վերաբերում է ներկայացված նմանարիպ պայմանագրի անճշտությանը, որն արձանագրել էր թիվ 4 արձանագրությամբ եւ այն շտկելու համար տրվել էր մեկ աշխատանքային օր: Տրված ժամկետում Ընկերությունը ներկայացրել է պայմանագրի շտկված տարբերակը եւ գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար:

Ըստ Պատվիրատուի, երկրորդ անհամապատասխանությունը, որը չի արձանագրվել թիվ 4 արձանագրությամբ, քանի որ ըստ էության անհամապատասխանություն չի եղել, այլ 7-լու չափաբաժնի համար առաջարկվել է լրացուցիչ ներկայացնել «առաջարկվող փականի երկրաչափական չափսերը եւ նշել թե՛ ինչ միջավայրի համար է նախատեսված»: Ընկերությունը ներկայացրել է պահանջվող փաստաթղթերը եւ գնահատող հանձնաժողովը գնահատել է բավարար:

ԳԲԲԱ-ԼՕ-2019/50 բողոքն ըստ էության չի վերաբերում արձանագրված անհամապատասխանություններին եւ դրանց շտկման պայմաններում փաստաթղթերի գնահատմանը:

Պատվիրատուն հայտը մերժել է առաջնորդվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով եւ 6-րդ մասով, սակայն ներկայացրած դիրքորոշմամբ վկայակոչում է նաեւ ՀՀ ֆինանսների նախարարության 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019թ պարզաբանումը եւ ԳԲ1Ա-ԱՄ-2018/96 առ 03.12.2018թ որոշումը պատճառաբանելով, որ մերժման հիմք են հանդիսացել նաեւ այդ երկու փաստաթղթերը:

Ֆինանսների նախարարության 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019թ. պարզաբանման վերաբերյալ որեւէ դիրքորոշում, վերլուծություն չենք կարող ներկայացնել, քանի որ այն հասանելի չէ Ընկերությանը եւ բովանդակությունը չի ներկայացվել վիճարկվող արձանագրությամբ կամ դիրքորոշմամբ:

Թեև Պատվիրատուն դիրքորոշմանը կից չի ներկայացրել նաեւ ԳԲ1Ա-ԱՄ-2018/96 առ 03.12.2018թ. որոշման օրինակը կամ մասնակի մեջբերել վերաբերելի

մեկնաբանությունները, սակայն գնումների պաշտոնական կայքից ծանոթանալով որոշմանն արձանագրում ենք, որ այդ որոշման եւ մեր ներկայացրած հայտի, բողոքի փաստական հանգամանքները նույնական չեն (վկայակոչված որոշումը վերաբերում է մասնակիցների կողմից ԱԷԱ-ի վերաբերյալ տեղեկություն չներկայացնելուն), ուստի Պատվիրատուի համար այն չէր կարող ուղորդող (նախադեպ) լինել եւ իրավական հետեւանք առաջացնի մասնակցի համար հայտերի գնահատման փուլում եւ սույն բողոքի քննության համար:»:

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 02.07.2019թ. գրությամբ դիմել է «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Էյջ Ջի Էյջ Քոնփանի» ՍՊԸ-ի կողմից 01.07.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն դիրքորոշմանը կից ներկայացնելով բողոքի քննության համար նշանակություն ունեցող բոլոր փաստաթղթերի պատճենները, հայտնել է հետևյալը.

«Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի, «Էյջ Ջի Էյջ Քոնփանի» ՍՊԸ-ի բողոքի քննության նպատակով Ձեր դիտարկմանն եմ ներկայացնում «Հայկական ատոմային էլեկտրակայան» Փակ Բաժնետիրական Ընկերության գրավոր դիրքորոշումը և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները:

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռք բերման նպատակով ս/թ մայիսի 13-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով գնման ընթացակարգը, որին թիվ 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11 չափաբաժինների համար մասնակցության հայտ է ներկայացրել բողոքաբեր «Էյջ Ջի Էյջ Քոնփանի» ՍՊԸ-ն՝ կազմելով կոնսորցիում Վրաստանի ռեզիդենտ հանդիսացող «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ հետ:

Մասնակցության հայտերի գնահատման արդյունքում՝ գնահատող հանձնաժողովի 04.06.2019թ. թիվ 3 որոշմամբ, 2, 4, 7 և 9 չափաբաժինների համար ցածր գնային առաջարկով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Էյջ Ջի Էյջ Քոնփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումը և սահմանված կարգով առաջարկվել է

ներկայացնել որակաորումն հիմնավորող հրավերով սահմանված փաստաթղթերը: Որակաորումը հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը արձանագրել է մի շարք անհամապատասխանություններ հրավերին, մասնավորապես.

- Ներկայացված նմանատիպ պայմանագրի շրջանակներում մատակարարումն իրականացված է ժամկետի խախտմամ (պայմանագիրը համարվում է ոչ պատշաճ կատարված)՝ պայմանագրով սահմանված է 20 օր ստորագրման պահից հաշված, որը լրանում է 02.05.2019, իսկ մատակարարումն իրականացվել է 03.05.2019,

- Քանի որ թիվ 7 չափաբաժնի համար առաջարկվում է համարժեք փական, ճիշտ գնահատման համար առաջարկվել է ներկայացնել առաջարկվող փականի երկրաչափական չափսերը և նշել թե ինչ միջավայրերի համար է նախատեսված:

Ի կատարումն ՀՀ գնումների մասին օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ ենթակետի և 34-րդ հոդվածի, և առաջնորդվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով՝ 21.06.2019թ. թիվ 4.1 արձանագրությամբ հանձնաժողովը մերժեց «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի մասնակցության հայտը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ հետ կոնսորցիումով է հանդես եկել նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար պաշտպանիչ միջոցների ձեռք բերման համար հրապարակված ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19 ծածկագրով գնման ընթացակարգին:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ հայտը մերժվել է քանի որ ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացվել է 01.1/26-1/10386-2019 առ 21.06.2019 պարզաբանումը: Պարզաբանման հարցումը «ՀԱԷԿ» ՓԲԸ կողմից ՀՀ ՖՆ էր ներկայացվել, քանի որ առկա է ԳԲԽ-ԱՄ-2018/96 առ 03.12.2018թ. որոշումը:

Ի պատասխան բողոքաբերի այն հայտարարությանը որ հայտը չի մերժվել թիվ 4 արձանագրությամբ հայտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության պարզաբանումը ստացվել է հանձնաժողովի 4-րդ արձանագրության նիստից հետո միայն (նիստը տեղի է ունեցել 17.06.2019, իսկ ՀՀ ՖՆ պարզաբանումը ստացվել է 21.06.2019):

Կարծում եմ, որ բողոքաբեր անձի բողոքը անհիմն է քանի որ կոնսորցիումի պայմանները սահմանվում և կարգավորվում են Հարկային օրենսգրքով, իսկ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի գնահատող հանձնաժողովը լիազորված է գնահատել հայտերը:»:

Պատվիրատուն ի պատասխան Ընկերության դիրքորոշմանը հայտնել է հետևյալը.

«Գնահատող հանձնաժողովի 17.06.2019թ թիվ 4 որոշմամբ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացված որակավորումն հիմնավորող փաստաթղթերում արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ հրավերին և քանի որ մասնակիցը թիվ 7 չափաբաժնով առաջարկել է համարժեք ապրանք՝ ճշգրիտ գնահատման համար, հանձնաժողովին անհրաժեշտ է եղել լրացուցիչ տվյալներ տեխնիկական բնութագրի վերաբերյալ: Սահմանված ժամկետում «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ կողմից ներկայացվել են շտկումներ, սակայն հանձնաժողովը չի դիտարկել այդ շտկումները քանի, որ համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի և 6-րդ մասի՝ «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ կոնսորցիումի մասնակցության հայտը ենթակա է եղել մերժման: Հետևաբար «էյջ Ջի էյջ Քոմփանի» ՍՊԸ այն պնդումը, որ ներկայացված շտկումը գնահատվել է բավարար իրականությանը չի համապատասխանում:

Ինչ վերաբերվում է մերժման հիմքերին տեղեկացնում եմ, որ հայտը մերժվել է համաձայն ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետի և 6-րդ մասի, իսկ Ֆինանսների նախարարության պարզաբանումը և ԳԲԽ-ԱՄ-2018/96 ընթացակարգի որոշումը լրացուցիչ հավաստում է հանձնաժողովի կայացրած որոշումների իրավաչափ լինելը:

ԳԲԲԱ-ԼՕ-2019/50 ընթացակարգի շրջանակներում ի պատասխան բողոքաբերի լիազորված անձի այն հայտարարությանը, որ, այո՛, իրենք կարող են կատարել երկու ընթացակարգերով էլ ստանձնած պարտավորությունները, որի մասին, ըստ իրենց, վկայում են ՀՀ ՊԵԿ-ից ստացված եզրակացությունները, Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ համարել գործունեության պայմանագրով ֆինանսական միջոցների և մասնագիտական փորձառնության մասով պարտականությունը ստանձնել է կոնսորցիումի կողմ հանդիսացող վրացական «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ, որի ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ՊԵԿ-ը որևէ տեղեկատվություն չի տրամադրում:»:

4. ԳԲԲԱ-ԼՕ-2019/50 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կարիքների համար սողնակների, կափույրների և փականների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ):

Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն /համատեղ գործունեության պայմանագիր «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ/:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 04.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն մրցույթի թիվ 2-րդ, 4-րդ, 7-րդ և 9-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն առաջարկել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորումն հիմնավորող փաստաթղթերը:

Հանձնաժողովի 17.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ կողմից որակավորումն հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովն առաջարկել է Ընկերությանը մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովի 21.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4.1 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստին ներկա էին՝

- Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գևորգյանը,
- Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քեսեջյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Արսենյանը, Ա. Խաչատրյանը, Թ. Հակոբյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Ղազարյանը,
- Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ռամազյանը:

Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետով և 6-րդ մասով, որոշել է մերժել «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի և «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի /համատեղ գործունեության պայմանագիր/ մասնակցության հայտը, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ն «Թեստինգ Սոլյուշնզ» ՍՊԸ-ի հետ կոսորցիումով է հանդես եկել նաև «ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար

պաշտպանիչ միջոցների ձեռք բերման համար հրապարակված մեկ այլ թիվ «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-11/19» ծածկագրով գնման ընթացակարգին:

Հանձնաժողովի կողմից որոշումը ընդունվել է՝ կողմ-8, դեմ-0 ձայներով:

Նշված արձանագրությունը ստորագրվել է Հանձնաժողովի նիստին ներկա հանձնաժողովի նախագահի, մյուս երեք անդամների և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Էյջ Ջի Էյջ Քոմփանի» ՍՊԸ-ի կողմից 01.07.2019թ. ներկայացված բողոքը ենթակա է բավարարման մասնակի, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 26-րդ կետի.

- 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի կազմը բաղկացած է առնվազն երեք անդամից և ունի նախագահ ու քարտուղար, որոնք սահմանվում են հանձնաժողովի կազմավորման մասին ակտով: Հանձնաժողովի նիստին նախագահի մասնակցության անհնարինության դեպքում նիստը նախագահում է ըստ հանձնաժողովի կազմում ընդգրկման առաջնահերթության նախագահի թեկնածուից հետո նշված՝ նիստին ներկա հաջորդող թեկնածուն,

- 2-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը,

- 4-րդ ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա

անդամների կեսից ավելին: Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք և քվեարկում է կողմ կամ դեմ: Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի, իսկ նրա բացակայության դեպքում նիստը նախագահողի ձայնը վճռորոշ է,

- 5-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստերը տեսաձայնագրվում կամ ձայնագրվում և արձանագրվում են, և յուրաքանչյուր նիստի արդյունքում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են այդ նիստի արձանագրությունը: Արձանագրությունը գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մասն է:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ պատվիրատուի ղեկավարի հրամանով ձևավորվում է գնահատող հանձնաժողով, որը բաղկացած է առնվազն երեք անդամից, ունի նախագահ և քարտուղար: Գնահատող հանձնաժողովի գործունեությունն իրականացվում է նիստերի միջոցով, իսկ նիստն իրավազոր է, եթե նիստին ներկա է հանձնաժողովի անդամների երկու երրորդը: Գնահատող հանձնաժողովի որոշումը համարվում է ընդունված, եթե այդ որոշմանը կողմ են քվեարկել հանձնաժողովի նիստին ներկա անդամների կեսից ավելին:

Ընդ որում նիստին ներկա հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտադիր կարգով ստորագրում են յուրաքանչյուր նիստի արդյունքում ընդունված որոշումը (արձանագրությունը), որն էլ համարվում է գնման ընթացակարգի արձանագրության անբաժանելի մաս:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ՝

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՀԱԷԿ-ԲՄԱՊՁԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 21.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4.1 արձանագրության (այսուհետ՝ Արձանագրություն) համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նիստին ներկա են եղել՝

- Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Գևորգյանը,
- Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Քեսեջյանը, Ա. Հովսեփյանը, Ա. Արսենյանը, Ա. Խաչատրյանը, Թ. Հակոբյանը, Վ. Պետրոսյանը, Ա. Ղազարյանը,
- Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Ռամազյանը:

Հանձնաժողովի կողմից որոշումը ընդունվել է՝ կողմ-8, դեմ-0 ձայներով:

Սակայն Արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ վերջինս ստորագրվել է նիստին ներկա միայն հանձնաժողովի նախագահի, մյուս երեք անդամների և հանձնաժողովի քարտուղարի կողմից:

Արձանագրությունը ստորագրված չէ նիստին ներկա գտնված, միևնույն ժամանակ կողմ քվեարկած Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Արսենյանի, Թ. Հակոբյանի, Վ. Պետրոսյանի և Ա. Ղազարյանի կողմից:

Նման պայմաններում, հիմք ընդունելով Կարգի 26-րդ կետի 5-րդ ենթակետի դրույթները, Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ Արձանագրության՝ վերը նշված հանձնաժողովի անդամների կողմից ստորագրված չլինելու հանգամանքը, փաստում է վերջիններիս նիստից բացակայելու, ներկա չգտնվելու մասին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովի կողմից 21.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4.1 արձանագրությունն ամբողջությամբ, այդ թվում նաև՝ «Էջ Ջի Էջ Քոմփանի» ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումները չեն բխում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից, հակասում են ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 2-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերի դրույթներին՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր չի եղել (նիստին ներկա է եղել հանձնաժողովի անդամների կեսը՝ երկու երրորդի փոխարեն), Արձանագրությունը ընդունվել է նիստին ներկա անդամների կեսի քվեարկության արդյունքում, այնինչ պետք է լիներ կեսից ավելին:

Վերոնշյալով պայմանավորված, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 21.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4.1 արձանագրությամբ կայացված որոշումները ոչ իրավաչափ են և այդ հիմքով ենթակա է դադարեցման, ուստի բողոքում նշված մյուս հիմքերին ու հիմնավորումներին, Բողոքներ քննող անձը չի անդրադառնում, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ դրանք այլևս չունեն ու չեն էլ կարող, հիմք հանդիսանալ կամ հանգեցնել բողոքի բավարարմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Էյջ Ջի Էյջ Քոնփանի» ՍՊԸ-ի կողմից 01.07.2019թ. ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/50 ծածկագրով բողոքը բավարարել մասնակի:

Պարտավորեցնել «ՀԱԷԿ-ԲՄԱՊԶԲ-20/19» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 21.06.2019թ.-ին թիվ 4.1 արձանագրությունն ամբողջությամբ:

Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**

ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ